ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

Ք. Եղեգնաձոր

<<03>> 03 2016թ N 7

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ , ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐԻ, ՄԱՐԶԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ 2017-2019 ԹԹ. ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2.4-րդ և 3-րդ մասերի, ՀՀ նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ - 728 հրամանագրի 1.6-րդ կետի, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1217-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2017 թվականի բյուջետային գործընթացի՝ Հայաստանի Հանրապետության 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության կողմից առավել վատ տեխնիկական վիճակում գտնվող հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների, մշակույթի տների, մարզական, առողջապահական օբյեկտների հիմնանորոգման և վերակառուցման, համայնքների գլխավոր հատակագծերի մշակմանն ուղղված միջոցառումների իրականացման համար կատարված ուսումնասիրության արդյունքները .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Մարզի 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ընդգրկել ներքոհիշյալ օբյեկտները համաձայն հավելվածի .

2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ա. Հովսեփյանի վրա:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ